ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

GHARABAGH (Documenti di Architettura Armena. Vol. 19.—Facolta di Architettura de Politecnico di Milano: Academia delle Scienze dell' Armenia Sovietica).—Milano: Edizione OEMME 1988, p. 109.

ՂԱՐԱԲԱՂ (Հայ ճարտարապետության վավերագրեր, հ. 19, Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետ, *ՀԽՍՀ ԳԱ*), *Միլան, ՕԷՄՄԷ հրատարակչություն, 1988, 109 էջ։*

«Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարի հերթական՝ XIX հատորը նվիրված է պատմական Արցախի պատմամշակութային հուշարձաններին։ «Ղարաբաղ» խորագիրը կրող այս գիրք-ալբոմը իր հրատարակչական բարձր որակով օտար ընթերցողին է ներկայացնում (բնագրերը՝ անգլերեն և իտալերեն) հայկական եկեղեցիներն ու վանքերը, ամրոցներն ու խաչքարերը։

Արցախի պատմության համառոտ ակնարկն այս գրքում մատուցվում է Սեդրակ Մանուկյանի հեղինակությամբ։ Արվեստաբան Մարի Ազելարիդե Լալա Կոմնենոն հանդես է գալիս «Ճարտարապետությունը Ղարաբաղում» վերնագիրը կրող հոդվածով։ Այս հոդվածը ամբողջական պատկերացում է տալիս ընդհանրապես պատմական Արցախի և նրա ճարտարապետության մասին։

Ճարտարապետ, հայ շինարվեստի քաջ գիտակ Պաոլո Կունեոն ղարաբաղյան հուշարձանները դասակարգել է «Համառոտ ցուցակ պատմական Արցախի շրջանի կրոնական հուշարձանների» վերնագրի տակ։ Եկեղեցիների խմբավորումը նա կատարել է հետևյալ կերպ. խաչաձև և քառախորան եկեղեցիներ, միանավ մատուռներ ու եկեղեցիներ, միանավ ավանդատնով եկեղեցիներ, երկու ազատ սյուներով կարճ բազիլիկներ, չորս կամ վեց սյուներով բազիլիկներ և վերջապես՝ վանական համալիրներ։

Գրքի վերջում առանձին ենթավերնագրով քննվում է այսպես կոչված դասական ճարտարապետության ձևերի վերածննդի հարցը, որն ընդգրկում է XIX—XX դդ. ցարական Ռուսաստանի իշխանության տարիները։ Հատուկ ուշադրություն է դարձվում ամենամեծ և նշանավոր՝ Շուշվա Ղազանչեցոց կամ ս. Ամենափրկիչ և Կանաչ ժամ եկեղեցիների վրա։

Գիրքը զարդարում են բազմաթիվ պատմական հուշարձանները ցուցադրող քարտեզներն ու լուսանկարչական ճոխ հավաքածուն։ Վերջիններիս հեղինակներից արժե հիշատակել Հուշարձանների պահպանության վարչության աշխատակից Սամվել Կարապետյանի անունը։ Նա տարիներ շարունակ, Լեռնային Ղարաբաղը իր աշխատանքի նշանակետը դարձրած, ի դին ամեն դժվարությունների ու վտանգների, կարողացել է լուսանկարել այս բարձրորակ պատկերները և հարուստ նյութ հավաքել այդ ժամանակ «արգելված գոտի» համարվող Արցախի վերաբերյալ։

Ա. Ժ. ՀԱԼԱՋՅԱՆ